ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 110

05 մայիսի 2018 թվական

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան գյուղի 11-րդ փողոցի թիվ 5 տան բնակիչ Կարապետ Գևորգյանին սեփականության իրեն պատկանող հողատարածքի հողի հարկի գծով հարկային պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ կերպով և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին կետի 24 ենթակետի պահանջներով, ինչպես նաև <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 1-ին կետի, 54 հոդվածի 1-ին կետի 55, 58, 59, 60 և 88 հոդվածների դրույթներով և հաշվի առնելով Անի համայնքապետարանի վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 18-ի որոշումը

Որոշում եմ՝

1. 174319 դրամ հողի հարկի գանձում կատարելու նպատակով դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության և խնդրել գանձված գումարը մուծելու Անի համայնքապետարանի հաշվեհամարին:
2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում հանձնել վարույթի մասնակիցներին:

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ